

**Ս. ՅՆԿՈՒԲԻ ՆԵՐՍԷՆ**

ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

**ՄԵՆԵՆՈՒՄ ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԿ ՀՕՐ**

Յունիս 15ին Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Լիբանան մեկնեցաւ քանի մը շաբթուան հանգիստի և օգափոխութեան համար: Սրբազան Պատրիարք Հայրը, Լուսառեղի Տ. Թորգոմ Պատրիարքի մասէն առդին, գրեթէ 4օրեացուցած էր իր հանգիստը: Գը տառապէր անքնութենէ: Բժշկական յանձնարարութեամբ, եւ Միաբանութեան Թախանձանքին տեղի տալով էր օր Սրբազան յանձնատան այս կարճ ժամանակեայ օգափոխութիւնը: Սրբազան Հայրը իր օգափոխութեան ընթացքին պիտի մնայ Պրքեփայա, Անթիլիասի կաթողիկոսարանին հովտը: Արդէն իսկ վերադարձած պիտի ըլլայ յառաջիկայ Վարդապետի տունին (Յուլիս 16) կատարելու համար քահանայական ձեռնադրութիւնը Ընձայարանի այս տարուան Գ. դասարանի տարկաւազներուն թիւով ութ հոգի:

**ՄԻԱԲԱՆԱԿԱԿԱՆ ԸՆԳԻՎ. ԺՈՂՈՎՆԵՐ**

Յունիս 12ին, ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, գումարուեցաւ Միաբանական Ընդհանուր Ժողով օրակարգ ունենալով վարչական եւ հաշուական համարաւում իբն Տնօրէն Ժողովոյ 1938 - 1939 տարեշրջանի, Այս առաջին նիստին մէջ Միաբանական Ընդհ. Ժողովը լսեց միայն կամարատուութեան ընթերցումը, իսկ աւելորդ ձեռութեամբ զբաղեցաւ Յունիս 14, 22, 29ին գումարուած նիստերուն մէջ: Վերջին երկու նիստերուն կը նախագահէր պատրիարքական փոխանորդ Գեր. Տ. Մկրտիչ Արք. Ալաւնունի: Վերջին նիստին մէջ Միաբանական Ընդհ. Ժողովը վաւերացուց Տնօրէն Ժողովոյ կամարատուութիւնը:

**ՅՕՆԱԿԱՆՔ**

Յունիս 4. եղիական Կիրակի, Ս. Հրեշտակապետաց եկեղեցին պատարագի ընթացքին քարոզեց Լուսարարապետ Հօգ. Տ. Կիրեղ Վրդ. ներկայացուց Եղի մարգարէն իբրև կրօնքի և բարոյականութեան մեծագոյն խառնաններէն մին, և անոր Քորեքի տեսիլքները վերլուծելով՝ մեկնեց աստուածային տիրոյ վարդապետութիւնը իբրև մարդկային ազդի փրկութեան միակ յոյսը:

Յունիս 11. Տօմ Կարաղիկէ եկեղեցւոյ Սրբոյ էջմիածնի. հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, քարոզեց Տ. Սիդիէ Վրդ. սրուն քարոզը ամբողջութեամբ գրուած է Սիւնի այս թիւին մէջ: Ս. Պատարագի աւարտումին՝ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարուեցաւ Երանաշնորհ Տ. Խորէն Ս. Կաթողիկոսի համար:

Յունիս 18 Կիրակի, ի Ս. Հրեշտակապետ քարոզեց Հօգ. Տ. Շաւարշ Վրդ. Մեծն Ներսէս հայրապետի մասին, որուն տունէ էր նախորդ օրը Ներկայացուց զայն իբրև տիպար աշխարհական, շինուորական և հոգևորական, և մարտական կատարել զէմք մը, ու կատարելութեան բաղձանքը ունեցող ամէն աստիճանի և կարգի մարդոց համար քարոյական գասեր հանեց անկէ:

29 իջ. Սրբոց Թարգմանեաց Վարդապետաց մեծոց Սամուէլի եւ Մեսրոպայ տունին հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յակոբեանց տաճարի մէջ. պատարագեց տեղւոյս Թարգմանեաց Վարձարանի նոր տեսուչ Հօգ. Տ. Սեբերէ Վրդ., քարոզեց Հօգ. Տ. Հայրիկ Վրդ. Սիրք զարգաբացին տնօրինարար զիմաստա Անէղիլի... քնարանով. վեր հանեց հայկական նշանաբերու զիւտին կարեւորութիւնը կրօնական և ազգային տեսակետներով, շնչաւելով Ս. Սահակի և Ս. Մեսրոպի անմոռանալի գերբեր այս մարզին մէջ:

Յունիս 1 Կիր. Գիւս Տիղոյ Ս. Աստուածմով: Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Աստուածածնի եւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիները, վերջնոյս մէջ քարոզեց Հօգ. Տ. Վահան Վրդ. որուն տունին մասին, պատմելով Ս. Աստուածածնի քօղի տուփին գուման պարագաները և այդ առթիւ բարոյական գասեր հանելով ժողովուրդին համար:

**ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՅՈՒՈՒԹԻՒՆՔ**

Յունիս 9ին Մեծն Բրիտանիոյ կայսեր, Վեհ. յօրճ Զ. Թագաւորի ծննդեան տարեդարձին առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, հետն ունենալով Հօգ. Տ. Կիրեղ Վրդ. և Աւագ Թարգման Տ. Պակ Վրդ.ը, ներկայ գտուեցաւ տեղւոյս Անկիլիքան եկեղեցիին մէջ կատարուած զօհարանական պաշտամունքին, իսկ յետ միջօրէի նոյն վարդապետներով, Նորուորական այցելութեան զնաց տեղւոյս Բարձր Գովիտէրի ապարանքը և ընդունուեցաւ Նորին Վսեմութենէն:

Յունիս 24ին Հօգ. Տ. Շաւարշ, Հօգ. Տ. Տիւրաբ վարդապետներ, զիւսանապետ Պ. Կ. Նուրեանի կետ Եմֆա գացին կալուածական գտտական խնդիրով: